ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» հուլիսի 2024 թվականի N: 293 - Ա ք.Գյումրի

ՍԱԹԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «ՀՈՌՈՄԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժդ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 85-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Հոռոմի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 16-ի N 3 որոշումը և Սաթենիկ Սարգսյանի 2024 թվականի հուլիսի 16-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սաթենիկ Սարգսյանին 2024 թվականի հուլիսի 17-ից նշանակել «Հոռոմի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի

պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:

2. 2024 թվականի հուլիսի 17-ից դադարեցնել Սաթենիկ Սարգսյանի՝ «Հոռոմի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունները՝ լուծելով նրա հետ 2024 թվականի մայիսի 8-ին կնքված N 5/ժպ աշխատանքային պայմանագիրը:

Ա.ՄԱՐՏԻԿՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է